ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ա

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2019Թ. ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Խաշթառակ համայնքի 2019թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԿՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԹԻՐԱԲՅԱՆ ՍՈՍ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38-Ն

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաշթառակ համայնքի 2019թ. բյուջեի եկամտային մասում ներառված են համայնքի մանկապարտեզի ծնողական վճարները: 2019 թվականի ընթացքում մանկապարտեզը վերանորոգվել է և այդ ընթացքում այն չի գործել: Վերանորոգումն ավարտելուց հետո չի աշխատել գույքի բացակայության պատճառով, այսինքն տարվա ընթացքում չաշխատելու պատճառով մանկապարտեզ հաճախելու համար նախատեսված տեղական վճար չի հավաքագրվել:

Հետևաբար հաշվի առնելով նշված փաստերը հարկ է առաջացել տեղական վճարների՝ ընդհանուր 3.36 մլն ՀՀ դրամ գումարը նվազեցնել 2.4 մլն ՀՀ դրամ չափով: Պակասեցնել Խաշթառակ համայնքի 2019թ. բյուջեի եկամտային և ծախսային մասերը՝ կատարել փոփոխություն: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Խաշթառակ համայնքի 2019թ. տեղական բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Բյուջեի եկամտային մասը պակասեցնել 2.4 մլն. ՀՀ դրամ, որից՝
1.1. տեղական վճար 2.4 մլն ՀՀ դրամ
2. Բյուջեի ծախսային մասը պակասեցնել 2.4 մլն ՀՀ դրամ, որից՝
2.1. Խաշթառակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի 09 բաժնի 01 խմբի 01 դասի 4511 (սուբվենցիաներ ոչ ֆինանսական պետական հազմակերպություններին) հոդվածի Խաշթառակի մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի նախահաշվի չօգտագործված մասը պակասեցնել 1.0 մլն. ՀՀ դրամով

2.2. 0.5 մլն. ՀՀ դրամով նվազեցնել Ընտանիքի անդամներ և զավակներ 10 բաժնի 04 խմբի 01 դասի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածի գումարը

2.3. 0.9 մլն ՀՀ դրամը նվազեցնել կառավարման ապարատի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի գումարը

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԿՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԹԻՐԱԲՅԱՆ ՍՈՍ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**